Մնան առ 1 Յունվարի 1886 ամի

| | | |
|---|---|---|
| Դրամատոմսակք . . | 31147 | 68 |
| Պատրաստի դրամք . . | 240 | 65 |
| Համագումար | 47802 | 74 |

Անդամ Կոնսիստորիայի՝ Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց։

Ատենադպիր՝ Գ. Խալաֆեանց։

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Շնորհակալութեամբ ստացանք

Ա. ԴԱՍԱԳԻՐՔ Գ՚ԾԱԳՐՈՒԹԵԱՆ (175 գծագրական պատկերներով)

Հայոց ուսումնարանների համար.

Երկրորդ տպագրութիւն բարեփոխած և ճոխացրած.

Աշխատասիրեց

Մ. Տէր Սարգսեանց

Ալէքսանդրապօլ, Գէորգ Սանոյեանցի Տպարանում 1887

Գինն է 50 կօպէկ.

—

Բ. № 4 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

ԱՏՈՎՄԵԱՆՔ, ՂԵՒՈՆԴԵԱՆՔ, ՎԱՐԴԱՆԱՆՔ.

Արտատպած Արարատ ամսագրից. գինն է 5 կոպէկ.

Թիֆլիս, Յովհաննէս Մարտիրոսեանի տպարան 1887 ամի.

—

և Գ. Հրահանգ քննութեանց և ստուգելոյ զվաւերականութիւն պսակաց և ծննդոց և զանցառութեան և անկանոն գրուածոց յարձանագրական մատեանս. գրեալ ի վերայ հիման օրինաց ի Յովհաննէս աւագ քահանայէ Չիժովըքըոյ. Թարգմանութիւն Սարգիս քահանայի Մաքսըմաճեան. Ռոստով (Դօնի վերայ) Տպարան Յովհաննու Տէր Աբրահամեան. 1886 ամի.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Սեպտեմբերի անցեալ 1886 ամի ընդ համարաւ 488. հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան տղայոց և միդասեան օրիորդական ուսումնարանի Ս. Սահակ եկեղեցւոյ Հայոց Իգդիր գեղջ՝ բարեկրօն Սամուէլ քա-